Ասածներից պարզ պիտի լինի ուրեմն, որ իսկապէս անկարելի էլ է փորձել գէթ մօտաւոր ճշդութեամբ թէ ի՛նչ տարածութիւն եւ ի՛նչ ազգաբնակութիւն ունէին տուեալ տարեթուերին Հայաստանը (Անդրկովկասեան), Վրաստանը եւ թաթարական երկրամասը, քանի որ դրանք երբեք էլ չեն ունեցել հաստատուն, ամէնի կողմից ճանաչուած եւ ընդունուած սահմաններ: Անդրկովկասում անկախ հանրապետութիւններ հռչակուելուց (1918 թ.) յետոյ անգամ՝ չստեղծուեցին այդ նախապայմանները:

Այսօր գոյութիւն ունեցող բաժանումներն էլ ոչ այլ ինչ են, եթէ ոչ վերից, երրորդ կողմից արուած հարկադրական թելադրանքներ: Նշանակում է՝ ինչ ասուի այս մասին, մանաւանդ նախնական շրջանների համար, պիտի ընդունել ո՛չ միայն մօտաւոր ճշդութեամբ, այլ եւ առանձ պայմանական ձեւով:

Այդ տեսակէտից մօտենալով խնդրին՝ վերյիշենք ուրեմն, որ 1838 թուականին, ռուս տիրապետութեան առաջին տասնամեակում, նորեկ տիրապետողները եւ առհասարակ հանրային դիտակցութիւնը — եթէ միայն խօսք լինե՛լ կարող է այն ժամանակուայ համար հանրային դիտակցութեան մասին — որպէս Հայաստան (Անդրկովկասեան) էին ճանաչում միմիայն «Հայկական Շրջանը». ասել է՝ Երեւանի եւ Նախիջեւանի նախկին խանութիւնները եւ կամ, յետագայի վարչական բաժանումով, Երեւանի նահանգը՝ առանց Շիրակի եւ Փամբակի (Ալ-Պոլի գաւառ):

VII

19-րդ դարի ընթացքում Անդրկովկասի ժողովուրդների մէջ չծագեց ազգային-հողային պահանջ, ցեղագրական ինքնամփոփման եւ քաղաքական խմաստով: Վրացիները, որ համեմատաբար նոր էին կորցրել իրենց քաղաքական անկախութիւնը եւ մի քանի անգամ անյաջող ապստամբութիւններ ապրել, ամենից աւելի պահեցին, ճիշդ է, ազգային ինքնուրոյնութեան դիտակցութիւնը, բայց նրանք էլ չուտ հրաժարուեցին դրանից: Դրա փոխարէն նրանք պահպանեցին ցեղագրական Վրաստանը գրեթէ անխաթար: Նրանք հոծ մեծամասնութեամբ նստած մնացին իրենց պատմական հայրենիքում:

Հայերի քաղաքական դիտակցութիւնը թէ-եւ արթնացաւ տակաւ, դարաւոր ստրկական անցեալի մրափից, բայց այդ դիտակցութիւնն էլ հայի քաղաքական ինքնուրոյնութեան անօթը սահմանի ա՛յն կողմը որոնել սկսեց եւ հետապնդեց յամառօրէն: Սահմանի այս կողմը նա կորցրել էր հայրենի հողերի մի մասը, միւս մասում էլ երկար ժամանակ մնաց նօսրացած վիճակում:

Մենք տեսանք արդէն, թէ ի՛նչ տխուր պատկեր էր ներկայացնում հայութեան քանակական պատկերը ռուս տիրապետութեան սկզբին եւ դեռ այնուհետեւ էլ, բաւական ժամանակ: Եւ որ գլխաւորն է՝ մեր հայրենի հողամասերը ծուէն-ծուէն էին արուած Անդրկովկասում: Հայութեան տարածման վայրերը այն ժամանակները կղզեակների էին նմանում, ընկած օտարացեղ ծովում: Անգամ «Հայկական Շրջան»-ը, որպէս այդպիսին, որ հայ հայրենասէրների մտորումներով կոչուած էր լինելու, դեռ մեզնից 100 տարի առաջ, վերածընուող հայ պետականութեան «կորիզը», աներեւութացաւ չուտով աշխարհացոյցի վրայից: Զարթնող հայ քաղաքական միտքն էլ հողային տեսակէտով ուրիշ հունի մէջ առնուեց:

Թաթարները որպէս ազգութիւն հօ գոյութիւն չունէին: Աւելի շուտ՝ կար մահմեդական բնակչութիւն, նոյն կրօնին պատկանող ցեղերի մի կատարեալ կօնգլօմերատ. զուրկ պատմական անցեալից, զուրկ սեփական մշակոյթից, զուրկ ազգային դիտակցութիւնից: Ռուս վիճակագրութիւնն եւս յաճախ նրանց խառնում էր մէկ ամանի մէջ եւ պարզապէս մահմեդական «ընդհանուր» յորջորջման տակ արձանագրում: Սեփական պետականութեան, սեփական տերրիտորիայի պահանջը չունէին: Հեռաւոր կերպով յիշում էին իրենց անցեալի կապը Պարսկաստանի հետ: Տաճկաստանի կապի մասին հօ խօ՛սք չկար: Անուանապէս — աշխարհագրապէս էլ չունեցան սեփական տերրիտորիա: Ցեղագրական տեսակէտից եւս անխառն չէր յետագային նրանց անուանը կապուած տերրիտորիան: Ամէն տեղ, եւ մանաւանդ ծայրամա-